

Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը տեղեկատվություն է ներկայացնում 2019 թվականի հունվար-սեպտեմբերին երկրի սոցիալ-տնտեսական վիճակի մասին:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՅՈՒՑԱՆԻՇՆԵՐ

**ԱՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող հիմնական ցուցանիշները
2019թ. հունվար-սեպտեմբերին**

	2019թ. հունվար- սեպտեմբեր	2019թ. հունվար- սեպտեմբերը տոկոսներով 2018թ. հունվար- սեպտեմբերի նկատմամբ
Տնտեսական ակտիվության ցուցանիշը, տոկոս	x	111.2
Համախառն ներքին արդյունք, մլն դրամ շուկայական գներով	218617.0	110.4
հիմնական գներով՝	207284.0	x
ՀՆԱ-ի ինդեքս-դեֆլյատորը (ընթացիկ գներով հաշվարկված ՀՆԱ-ի հարաբերությունը նախորդ տարվա համադրելի գներով հաշվարկված ՀՆԱ-ի ծավալի նկատմամբ), տոկոսներով	x	100.2
Արդյունաբերական արտադրանքի ծավալը, մլն դրամ	115618.0	142.4
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը, մլն դրամ	50526.8	93.4
Շինարարության ծավալը, մլն դրամ	42050.9	128.2
Առևտրի շրջանառության ծավալը, մլն դրամ	92546.5	107.9
Ծառայությունների ծավալը, մլն դրամ	54925.4	120.2
Արտաքին առևտրաշրջանառությունը հազ. ԱՄՆ դոլար	476579.2	118.3
մլն դրամ	229216.5	x
այդ թվում՝ արտահանում հազ. ԱՄՆ դոլար	204672.9	139.6
մլն դրամ	98377.3	x
ներմուծում հազ. ԱՄՆ դոլար	271906.3	106.2
մլն դրամ	130839.2	x
Միջին ամսական անվանական աշխատավարձը, դրամ	171869	107.8
Սպառողական գների ինդեքսը	98.7**	100.6
Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսը	80.3**	94.8

* Հիմնական գներով ՀՆԱ-ն, ի տարբերություն շուկայական գներով ՀՆԱ-ի, իր մեջ չի ներառում հարկերն ապրանքների վրա, բայց ներառում է սուբսիդիաներն ապրանքների վրա: Հիմնական գներով տվյալները բերված են առանց ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունների:

**2019թ. սեպտեմբերը 2018թ. դեկտեմբերի նկատմամբ:

Ապրանքների արտադրության և ծառայությունների փոփոխությունները
 2019թ. հունվար-սեպտեմբերին
 (տոկոսներով՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ)

